

բաւական համոզելու զմեզ, որ շատ մօտէն ու շատ խոր կերպով կը շօշափենք մեր ազգին մտաց թելերը: Եւ մեր հարց բարոյից այս ներքին քննութեան պահուն՝ պէտք չենք զգար ձգելու մեր եւ անոնց մէջ այն վարագոյրը, զոր յիշեալ երկու վարդապետները պատշաճ համարեցան պարզել օտարին խոժոռ եւ աններող աչերուն դէմ: Ադոնց օրինակին ու բացատրութեանց հետեւեցան նաեւ արդի գրողներէ ոմանք, ինչպէս Յակ. Նալեան (Վէմ. 651-4), Տէրոյենց (Իրաւ. Բ, 206-36), Լոյս հանդէսը (1905, էջ 298) եւ ուրիշներ, որոց ուղղութեան հարկը կամ օգուտը գէթ մեր օրով՝ չեմ ըմբռներ ես, որ կը սիրեմ իրապաշտութիւնը պատմութեան մէջ:

2. — Օտարաց մէջ: — Այն բուն պայքարը սակայն, զոր դարերու շրջանին մէջ մղեցին օտարները Հայոց զոհակերպ մատաղին դէմ, պիտի չունենար նոյն ուժգնութիւնը, եթէ այդ հակառակորդները գիտնային՝ թէ իրենց ալ կարելի էր՝ գոնէ երբեմն՝ ուղղել նոյն կշտամբութիւնը: Կոնիբիր իւր յօդուածին մէջ կը նկրտի ցուցընել՝ թէ « անասնոց զոհերը » կային հին ընդհանուր եկեղեցեաց մէջ. եւ առ այս յառաջ կը բերէ յոյն գրչագրերէ մատաղի